



MILLENNIUM
CHALLENGE
CORPORATION

BIOGRAPHY
WWW.MCC.GOV

ԴԵՍՊԱՆ ՋՈՆ ԴԱՆԻԼՈՎԻՉ Գլխավոր գործադիր տնօրեն



Դեսպան Ջոն Դանիլովիչը Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնը ստանձնել է 2005թ. նոյեմբերի 7-ին՝ շարունակելով մասնավոր ու պետական ոլորտներում իր ավելի քան 30 տարվա ակնառու մասնագիտական գործունեությունը:

Նախքան նախագահ Բուշի կողմից ՀՄԿ գլխավոր գործադիր տնօրեն նշանակվելը՝ դեսպան Դանիլովիչը 2001-2004թթ. եղել է ԱՄՆ դեսպանը Կոստա Ռիկայում, իսկ դրանից հետո ԱՄՆ դեսպանը Բրազիլիայում:

Դեսպան Դանիլովիչը զբաղվել է մասնավոր ներդրումներով ու գործարարությամբ՝ ունենալով մասնագիտական խորը գիտելիքներ արտաքին հարաբերությունների վերաբերյալ: Ծնվել է Կալիֆորնիայի նահանգում, երկար տարիներ բնակվել է Լոնդոնում ու շուրջ երկու տասնյակ տարի ակտիվորեն գործել է բեռնափոխադրումների բիզնեսի ոլորտում, որպես տնօրեն աշխատել է բեռնափոխադրումների, անշարժ գույքի, հրատարակչության ու ներդրումների ոլորտի ընկերություններում:

Դեսպան Դանիլովիչը 1991-96թթ. եղել է Պանամայի ջրանցքի հանձնաժողովի տնօրենների խորհրդի կազմում և նախքան ջրանցքը պանամացիներին փոխանցելը ղեկավարել է փոխանցման աշխատանքը նախապատրաստող կոմիտեի աշխատանքը: Նա եղել է Ստանֆորդ Յունիվերսիթի Թրաստի տնօրեն, Մեծ Բրիտանիայում ամերիկյան թանգարանի կառավարման խորհրդի անդամ, Ֆուլբրայթի ԱՄՆ-Մեծ Բրիտանիա հանձնաժողովի տնօրեն, ինչպես նաև ղեկավար պաշտոններ է զբաղեցրել մի շարք բարեգործական կազմակերպություններում:

Դեսպան Դանիլովիչը նախ ուսանել է Ստանֆորդի համալսարանում՝ ստանալով քաղաքագիտության բակալավրի կոչում, ապա Հարավային Կալիֆորնիայի (Լոնդոն) համալսարանում, ուր ստացել է միջազգային հարաբերությունների մագիստրոսի կոչում: Դեսպան Դանիլովիչը Արտաքին կապերի խորհրդի անդամ է, Յեյ Համալսարանի Փիերսոն քոլեջի ավագ գիտաշխատող, կրում է Մալթայի ասպետի տիտղոս և արժանացել է բազմաթիվ ամերիկյան ու միջազգային պարգևների, այդ թվում Չոթ դայրոցի շրջանավարտների պատվավոր շքանշանի:

Դեսպան Դանիլովիչն ու իր կին Իրենեն, որ ներկայումս հաստատվել են Վաշինգտոնում, ունեն երեք զավակ: